

**Իրանահայ համայնք**

**ԱՄՈԹԱԼԻ ԱՐԱՐՔԸ  
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է**



**ԱՐԱՄ Ա. ՎԵՋԱՓԱՌԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿՐՈՆԱՊԵՏ ՆԵՐԿԿԱՅԱՑՆՈՂ  
ՊԱՍՏԱՌԸ ՓՈԽԵՑԻՆ՝ ԿՐԿԻՆ  
ԳՐԵԼՈՎ ՄԻԵՎՆՈՒՅՆԸ**

Իրանի «Իսլամական մշակույթի եւ հաղորդակցության կազմակերպության» հրավերով, մայիսի 7-ից, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառը գտնվում է Իրանում: Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի հայտարարությունների և Թեհրանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու ճակատին տեղադրված պաստառի հետևանքով, որտեղ Արամ Ա Վեհափառը ներկայացվել է, որպես ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱՊԵՏ, զայրույթի և դժգոհության ալիք է ստեղծել իրանահայ համայնքում: Այդ դժգոհությունը, ավելի խորացավ, երբ իրանական մամուլն ու լրատվությունը ևս, շփոթվելով, Արամ Ա. Վեհափառին ներկայացրեցին, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհուրդը, առաջացած դժգոհության հետևանքով խորամանկորեն, Ս. Սարգիս եկեղեցու ճակատին տեղադրված պաստառը, փոխարինել է մի նոր պաստառով, որի բովանդակությունը շատ տարբեր չէ առաջինից՝ կրկին պարսկերեն լեզվով, Արամ Ա. Վեհափառին ներկայացնելով՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱՊԵՏ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ: Հիշեցնենք, որ Թեհրանի հայոց թեմի եկեղեցիներում Սբ. Պատարագ մատուցելիս, Արամ Ա-ին հիշելիս նաեւ հիշատակվում է «Արամ Ա. կաթողիկոս ամենայն հայոց Մեծի Տանն Կիլիկիո»:

**Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը դատապարտում է, որ Իրանում Արամ Ա-ին անվանել են Ամենայն հայոց կաթողիկոս**

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի Իրան կատարած այցի ժամանակ Հայ Եկեղեցու թեմական կառույցների պատասխանատուների եւ այցը լուսաբանող լրատվամիջոցների կողմից Արամ Ա-ի պարագային գործածվել է Ամենայն հայոց կաթողիկոսի

տիտղոսը: Այս տեղեկությունը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հաստատել է նաեւ Ամենայն հայոց կաթողիկոսի մամուլ խոսնակ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է այսօրինակ պահվածքը, որով փորձվում է արհեստական շփոթ առաջացնել եւ այսկերպ լարվածություն առաջ բերել ներեկեղեցական եւ հանրային կյանքում: Հարկ է, որ թեմական կառույցների պատասխանատուները եւ իրանական լրատվամիջոցների ներկայացուցիչները վերապահ մնան նման անընդունելի քայլերից եւ հարգեն եկեղեցական սրբազան նվիրապետությունը», - նշել է Մելիքյանը:

**ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ԹԱԼԱՆՎԱԾԻ ՄԱՍԻՆ**



**Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻՑ ԱՆՀԵՏԱՑԱԾ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ ՍՊԱՀԱՆԻ ՀԹ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՉՂԱՐԱՐՈՒՄ Է ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻՆ**



«Արաքս» շաբաթաթերթ, Թեհրան, 21.05.2012թ.: Վերջերս մեր ձեռքն անցավ Սպահանի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից թալանված և ապա Վանք վերադարձված գրչագիր գրքերից պոկված էջերի ու նաև դրանց հետ միասին երկու նամակների պատճեններ. առաջինը՝ ՍՀԹ առաջնորդ Տ. Բարգեն եպիսկ. Չարյանի ստորագրությամբ, 10 դեկտեմբերի 2008թ., իսկ եկրորդը՝ ՍՀԹ Թեմական խորհրդի ստորագրությամբ, 29 դեկտեմբերի 2008 թվակիր, որոնք շնորհակալագրեր են՝ հղված այն մարդուն, ով թանգարան է վերադարձրել թալանված իրերից տասը նմուշ: Վերոհիշյալ նամակների վրա արձանագրված թվականները վկայում են նրանց չորսամյա հնության մասին, սակայն այն ինչ դրանց արդիականացնում՝ այժմեականություն է տալիս,

այն է, որ այդ ուրախ լուրի՝ թանգարանային իրերի վերադարձի, նկատմամբ Առաջնորդի և Թեմական խորհրդի ժամանակին և մինչ այժմ որդեգրած քար լուծությունն է: Ի՞նչն է Սպահանի հայոց թեմի Առաջնորդին ու Թեմական խորհրդին մղել այս հարցով քար լուծություն պահպանել ու ոչ թափանցիկ գործունեություն վարել, հետևաբար և հարցերը «խորհրդապահորեն» լուծելու տարել: Ի՞նչն է նրանց պարտադրում չպատասխանել իրանահայ մամուլի բարձրացրած հարցերին, և ի վերջո ինչը՞ կամ ո՞վ է արգելում նրանց Վանքից անհետացած իրերի ցուցակը հրապարակել: Թեմական խորհուրդը, գողերին թողած, ամենայն լրջությամբ ազդարարություն է կարդում իրանահայ մամուլի գլխին, շեշտելով, որ. «Իրանահայ մամուլի որոշ օրգանների և կայքէջերի միջոցով Թեմիս մարմինների և ազգայինների նկատմամբ տարածուղ զրպարտանքները կանխելու նպատակով, Խորհուրդս դատախազության միջոցով գանգատ է ներկայացրել այդ ուղղությամբ աշխատող ռստիկանության բաժանմունքին»: ՄՀԹ Պատգամավորական ժողովի վերջին տարեկան տեղեկագրում, Սպահանի Թեմական խորհուրդը գեկուցելով Մբ. Ամենափրկիչ վանքի թանգարանի մասին, մյուս կողմից նաև հաստատում է, որ թանգարանի թալանում դերակատար են եղել «Առաջնորդարանի պաշտօնեաներ» և որ արդեն «մինչև դատական գործի աւարտը և վճռի հրապարակումը, ... առկախվել է նրանց աշխատանքը և այդ մասին պաշտօնապես փոխանցել ենթականերին»: Սպահանի Թեմական խորհրդի նման պահվածքը և գործունեությունը ընդհանրապես վստահություն չի ներշնչում և պարտավորեցնում է կրկին անգամ հարց բարձրացնել այն մասին, թե ինչու չի հրապարակվում թալանվածի ամբողջական ցանկը: Եվ ահա այս նոր փաստի հրապարակ գալը թույլ է տալիս ենթադրել, որ թալանված, անհետացած թանգարանային իրերի թիվը շատ ավելին է, քան այն ինչի մասին խոսում են Սպահանի «ազգային մարմինները»:

**Ատրպատականի Հայոց Թեմի արխիատունը թայնացում է արդիական սարքերով**

Վերջին ամսայ ընթացքում, Ատրպատականի Հայոց Թեմի հարիւրաւոր տարիների նիւթ պարփակող արխիատունը վերադասաւորման է ենթարկւում, կարենալ օգուելու համար այնտեղ պահած անգին հարստութիւններից և պատմական տւեալներից: Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանի հովանաւորութեամբ և Թեմական Խորհրդի որոշումով ձեռնարկւած սոյն աշխատանքը հետեւողականօրէն յառաջ է տարւում, անցած դարերի բոլոր նամակագրութիւնները, գործակալական աշխատանքների վաւերաթղթերը և կալւածային փաստաթղթերը թայնացած տարբերակներով ունենալու առաջադրանքով: Աշխատանք՝ որը նաեւ կը փրկի Թեմի հարստութիւնը ներկայացնող այս գանձերը փճացումից:

**Հայաստան**

**Ադրբեջանը պատրաստ չէ պատերազմի, իսկ մենք պատրաստ ենք հաղթանակի.**

**Կոմանդոս**

08 Հունիսի 2012



Պատերազմի վերսկսման հավանականության մասին հարցին, Արցախի հերոս, գեներալ Արկաղի Տեր-Թադևոսյանը այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ պատասխանեց ռազմագիտական կանոններով, ըստ որոնց՝ պատերազմ սկսելու համար նախ տվյալ երկրի ժողովուրդը պետք է պատրաստ լինի, երկրորդ՝ բանակը և, հետո՝ իշխանությունը: «Այս եռանկյունին հնարավորություն է տալիս ցանկացած երկրի ռազմական գործողություններ սկսել և հաղթել: Ադրբեջանում 12 ազգային փոքրամասնություններ են ապրում: Նրանց մեջ այսօր մեծանում է ազգային ինքնապահպանման խնդիրը և այս տարածայնությունների և ատելության ֆոնին՝ ամենավտանգավոր և բարդ վայրերում կռվելու են ուղարկվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները», - նշեց նա: Հարցին՝ որքանով է Հայաստանը պատրաստ պատերազմին, Կոմանդոսն արձագանքեց. «Մենք պատրաստ ենք և հաղթելու ենք: Սկզբում դժվարություններ կունենանք, բայց չկասկածեք մեր հաղթանակի մեջ: Մենք ունենք և համապատասխան ռազմական ներուժ, և մարդկային ռեսուրս, և որ ամենակարևորն է մարտական ոգի, որին հնարավոր չէ հաղթել գենքով: Բոլոր միջազգային կառույցները մեր բանակի մասին բարձր գնահատանքով են խոսում: Նույնը կարող եմ հավաստիացնել նաև ես: Եթե նրանք պատրաստ լինեին պատերազմի, արդեն վաղուց սկսել էին: Այսօրվա պատերազմը տարբերվում է նախկին պատերազմի ձևից: Այսօր առաջինը ոչնչացնում են տվյալ երկրի կենսական անհրաժեշտության կառույցները»: Տեղափոխվելով դիվանագիտական հարթություն՝ Արկաղի Տեր-Թադևոսյանը ակնարկեց, թե արտաքին գերատեսչությունը պետք է ակտիվ և լավ աշխատի՝ հաշվի առնելով, որ Ադրբեջանի թիկունքում կա Թուրքիա, իսկ մենք, մեծ իմաստով, մենակ ենք:

**Ադրբեջանն ու Թուրքիան հասկանում են, որ  
նոր պատերազմը չի սահմանափակվի ԼՂ  
սահմաններում. Զրայր Կարապետյան**



Բոլորը հասկանում են, որ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հանրապետության դեմ ագրեսիայի դեպքում նոր պատերազմը չի սահմանափակվի ԼՂ սահմաններում: Այսօր՝ մայիսի 24-ին, մամուլի ասուլիսում նման տեսակետ հայտնեց 4-րդ գումարման ԱԺ-ի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Զրայր Կարապետյանը:

Հիշեցնենք, որ օրերս տեսականորեն ժամանակ ԶԱԿԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժան հայտարարել էր, որ Զայաստանի հանդեպ ոչ բարեկամական գործողությունների դեպքում, ԶԱԿԿ անդամ երկրները անհրաժեշտ օգնություն կտրամադրեն:

Այս հայտարարությունը հիշեցնելով, ԶՅԴ անդամը նշեց. «Աստված չանի, բայց պատերազմի դեպքում այն կանդրադառնա ոչ միայն Լեռնային Ղարաբաղի վրա եւ դա շատ լավ հասկանում են Ադրբեջանում եւ Թուրքիայում»:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի սադրանքների հայկական կողմի պատասխան քայլերին, Զրայր Կարապետյանն ընդգծեց, որ Ադրբեջանը պարբերաբար ստիպում է պատասխան տալ:

Հիշեցնենք, որ ապրիլի վերջին ադրբեջանական կողմը մի շարք սադրիչ ակտիվ գործողություններ է իրականացրել. Ղարաբաղի հետ շփման գծում կրակահերթ է արձակել սանկտարական մեքենայի վրա, Զայաստանի հետ շփման գծում կրակահերթ է արձակել Դովեղ գյուղի մանկապարտեզի վրա, իսկ Բերդի ուղղությամբ կազմակերպվել է դիվերսիա, որի հետեւանքով երեք հայ զինվորական էր սպանվել:

**«Մուսա լեռան 40 օրը» թարգմանած  
բանաստեղծի անհետացման հարցը դեռ չի  
բացահայտվել**

*Շունայիստների Գյումրիի «Ասպարեզ» ակումբը տեղեկացնում է, որ ավստրալացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» հայտնի վեպը հայերեն թարգմանած ծնունդով շիրակցի բանաստեղծ, թարգմանիչ Պարույր Միքայելյանը ըստ արժանվույն չի գնահատվել, ոչ մի տեղ, ոչ մի անգամ թարգմանչի անունը չի շոշափվում, չի նշվում, որ «Մուսա լեռան 40 օրը» գիրքը Պարույր Միքայելյանն է թարգմանել:*

Թարգմանչի եղբոր որդին՝ Պարթև Մարտիրոսյանը ասել է, որ հորեղբայրը շատ հումորով, խելացի, տաղանդավոր մարդ էր, մի քանի լեզուների էր տիրապետում ու չի ուզում, որ նրա անունը մոռացության մատնվի: Թարգմանիչ ու բանաստեղծական մի շարք գրքերի

հեղինակ Պարույր Միքայելյանը ծնվել է 1924 թ: Մասնագիտությամբ մանկավարժը նաև գրականությամբ է զբաղվել, աշխատել Գրողների միությունում, ապա «Հայաստան» հրատարակչությունում:



Խորհրդային համակարգից ու ժամանակից դժգոհ թարգմանիչը, որ ղեկավարել է նաև հայ գրուսաշրջիկների խումբը «Հունաստան- Եգիպտոս-Թուրքիա» ուղերթով, 1977 թ. փետրվարին, Հունաստանի Պիրեյ նավահանգստից որդու՝ այդ ժամանակ օտար լեզուների ասպիրանտ Վահրամի հետ, անսպասելի անհետացել է: Մինչև այժմ էլ հարազատները նրանցից ոչ մի լուր չեն ստացել: «Ոչ այստեղ եղբորն է ասել, թե գնում եմ ու մնաս բարով ասել, ոչ էլ գնալուց հետո է կապ պահպանել: Մենք նրանից ոչ մի տեղեկություն չունենք: Չգիտենք՝ ուր է գնացել, ինչ է եղել: Այն ժամանակ նրա մասին ասում էին, որ այլախոհ է, դժգոհ է խորհրդային կարգերից: Երևի գաղափարական ինչ-որ հարցեր են եղել, չեմ կարող ասել», ասել է թարգմանչի եղբոր որդին: Կա վարկած, թե Միքայելյանը քաղաքական ապաստան է խնդրել արտասահմանյան իշխանություններից, բայց այդ մասին ևս հարազատները ոչ մի տեղեկություն չունեն. «Կամ գուցե ինչ-որ մեկը իմացել է և թաքցրել է, չգիտեմ»: Ըստ ազգականի՝ ողջ լինելու դեպքում նա 88-ի աղետից հետո ինչ-որ կերպ կարձագանքեր, գոնե եղբոր ու նրա ընտանիքի որպիսությամբ հետաքրքրվելու համար: Սակայն ոչ միայն աղետը, այլև խորհրդային համակարգի փլուզումը, չբացահայտեցին նրա անհետանալու փաստը:

**Հայկական արբանյակ կարձակեն**

*Վարչապետ Տիգրան Մարգարյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության «Մեքենաշինության գիտահետազոտական կենտրոնական ինստիտուտ» պետական դաշնային ունիտար ձեռնարկության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Օլեգ Սկորոբոգատովին և նույն հաստատության գլխավոր տնօրենի տեղակալ Սերգեյ Սերեդնինին:*

Հանդիպման ընթացքում, որին ներկա էին նաև Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոն և դեսպանության խորհրդական Վիկտոր Կրիվոպուսկովը, քննարկվել են տիեզերքի բնագավառում երկու երկրների միջև համագործակցության հեռանկարները: Մասնավորապես, գրուցակիները խոսել



են կապի ոլորտում գործելու նպատակով հայկական կոմերցիոն արբանյակի հնարավոր արձակման հետ կապված հարցերի մասին:



Այս առումով կողմերը նշել են, որ պատրաստ են ձեռնարկել տվյալ ծրագիրը գործնականում կյանքի կոչելու համար անհրաժեշտ միջոցներ: Որպես տվյալ ուղղությամբ կատարվելիք առաջին քայլ նշվել է էլեկտրակապի միջազգային միությունում գրանցման սահմանված գործընթացն սկսելու անհրաժեշտությունը:

**Ա.Վիրաբյան. Թուրքիան Հայաստանին պետք է փոխհատուցի ավելի քան 250 մլրդ դոլար**



Panorama.am. 24-4-2012- «Թուրքիայից փոխհատուցում պահանջելու, մասնավորապես ֆինանսական փոխհատուցում պահանջելու գործընթացը սկսվել է դեռևս 1918թ-ին, երբ Հովհաննես Թումանյանը ստեղծեց մի հանձնախումբ, որը գրի էր առել բոլոր տվյալները նրանցից, ովքեր փրկվել էին թուրքի յաթաղանից»,- Panorama.am-ի հարցին ի պատասխան, թե արդյո՞ք ժամանակը չէ, որ Հայաստանը Թուրքիայից կոնկրետ փոխհատուցում պահանջի ասաց Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը: Այդ աշխատանքների ժամանակ հաշվարկվել է ռուբլիով, թե նյութական վնասն ի՞նչ չափի է, այդ գումարը վերածվել ֆրանկի, քանզի հասցեագրվել է Փարիզի Խաղաղության կոնֆերնսին. «Այո, մենք պետք է այդ աշխատանքները տանենք, փոխհատուցման հստակ պահանջ ներկայացնենք, քանի որ այդ տվյալներն ունենք: Տնտեսագետները հստակ հաշվարկ են կատարել, թե 1919թ-ից այսօրվա դրությամբ ֆինանսական այդ թվերը գումարային ինչ տեսք ունեն: Եվ եթե հարկ լինի, պատրաստ ենք հիմա էլ այդ աշխատանքը տանել»,- նշեց մեր զրուցակիցը: Ճշտող հարցին, թե գումարային

ի՞նչ տեսք ունի այսօր ցեղասպանված հայության կարողությունը և ըստ այդմ ի՞նչ չափի կլինի փոխհատուցման չափը, Ա.Վիրաբյանը նշեց, որ 1919-ին գումարը կազմել է 200 մլն ֆրանկ, իսկ այսօր այն ահռելի է: «Այսօր արդեն այդ գումարը 250 մլրդ դոլարից անցել է: Ես գտնում եմ, որ ոչ միայն Ցեղասպանության (Armenian Genocide) ճանաչման ուղղությամբ պետք է աշխատանք տարվի, այլև հատուցման»,- ասաց նա: Ա.Վիրաբյանը հավելեց, որ Թուրքիան ընդունել է օրենք հայերից տիրագուրկ մնացած գույքը պետականացնելու և հետագայում այն տարբեր քաղաքացիների հանձնելու և վաճառելու մասին. «Թուրքական օրենք կա այդպիսի, այսինքն, եթե մենք նույնիսկ ուսումնասիրենք թուրքական իրավական ակտերը, ապա կարող ենք տեսնել ու ապացույցը դրանում է, որ եղել է հայկական գույք, որը ճանաչվել է տիրագուրկ, որն անցել է պետությանը, իսկ այն էլ, իր հերթին, տնօրինել այն ինչպես ցանկացել է»,- հավելեց արխիվի տնօրենը: Ինչ մնում է տարածքային պահանջատիրությանը, ապա Ա.Վիրաբյանը հղում արեց Սերժ Սարգսյանի խոսքերին, այն է՝ տարածքային պահանջատիրության մասին այսօր խնդիրներ մենք չենք դնում:

**ՀՀ-ում ԻԻՀ-ի նորանշանակ դեսպան՝ Մոհամմադ Ռեյխի**



Թեհրանում ՀՀ դեսպանության եւ Հաայաստանում Իրանի ԻՀ նորանշանակ դեսպան Մոհամմադ Ռեյխի համատեղ նախաձեռնությամբ, ՀՀ դեսպանատանը, իրանահայ մամուլի ներկայացուցիչների հետ կազմակերպվել էր ծանոթացման եւ մտքերի փոխանակման մտերմիկ հանդիպում: Հանդիպման սկզբում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան պրն. Գրիգոր Առաքելյանը խոսեց Իրան-Հայաստան բարեկամական հարաբերությունների մասին, ապա մեկ առ մեկ իրանահայ մամուլի ներկայացուցիչներին ծանոթացրեց իրանցի գործընկերոջը եւ ամփոփ բացատրություն տվեց նրանց գործունեության վերաբերյալ:

## Արեւմտյան Ղայաստան

### «Հայերի ոսկիներ» որոնողները վնասում են Հաքքարիի հայկական եկեղեցին

Ներկայիս Թուրքիայի հարավ-արևելյան շրջանում գտնվող Հաքքարի նահանգի Քոնաք գյուղում գտնվող հայկական եկեղեցին դարձել է «հայերի ոսկիներ» որոնող խմբերի թիրախ: Ինչպես տեղեկացնում է թուրքական «Դոդան» գործակալությունը, գանձ որոնողները զգալի վնաս են հասցրել եկեղեցուն: Եկեղեցու պատերի մեջ անցքեր են արվել, շինության հիմքի մոտ էլ փոսեր են փորվել:



Հաքքարիի շրջանային խորհրդարանի անդամները կոչ են արել օր առաջ տեր կանգնել և վերանորոգել եկեղեցին, որն ամբողջովին անտերության է մատնված և կործանման եզրին է: Տեղի դատախազությունն էլ արդեն գործ է հարուցել՝ պատմական արժեք ունեցող շինությանը վնաս հասցնողներին գտնելու և պատասխանատվության ենթարկելու համար: Առայժմ եկեղեցուն մեծ վնաս հասցրած անձինք չեն հայտնաբերվել: Թուրքական աղբյուրը նշում է, որ եկեղեցին շուրջ 100 տարեկան է և գտնվում է Հաքքարի քաղաքից շուրջ 20 կմ հեռավորության վրա:

### «Մահվան կիրճը» դեռ մահաբույր է. այցելություն Թուրքիայում Ցեղասպանության զոհերի զանգվածային գերեզմաններից մեկը

[NEWS.am](#)-ը մեջբերում է The Armenian Weekly խմբագիր, Rutgers համալսարանի «Հայոց ցեղասպանություն» ծրագրի համակարգող (ԱՄՆ) և Զլարթի համալսարանում Հոլոքոստի և ցեղասպանության թեմայի ուսումնասիրությամբ դոկտորի աստիճանի արժանացած [Խայկ Աուրադյանի ակնարկը, որը պատմում է Թուրքիայի Դիրաբեքի շրջանի Չսբուշում 10 հազար հայերի կոտորածի վայր այցելության մասին:](#)

«Նրանք այստեղ հայերին բերում էին հազարներով, խլում նրանց ունեցվածքը և նետում կիրճը», – ասում է բուրգ գյուղացին, որը մեզ բերեց այստեղ: Ըստ տեղացիների՝ կիրճն անհուն է: Հայերն ու բուրգերն այն անվանել են Դուդան, այն հայտնի է նաև որպես Յուդան Դերե:

Տարբեր աղբյուրներ վկայում են, որ 10 հազար հայեր են բռնկվել այստեղ թուրք ժանդարմների կողմից և սպանվել:



«Մեր գյուղում մի կին էր ապրում: Նա 104 տարեկան էր... Նա տեսել էր այդ ամենը»:

Մի փոքր մտածելով՝ նա ավելացնում է. «Բոլորն այդ մասին գիտեն»:

Կիրճ տանող ճանապարհը մենք հարցրինք մի տղամարդուց: Նա եկավ մեզ հետ: Երբ հասանք, մեր վարորդը՝ դիարբեքիցի բուրգ, հարցրեց. «Ի՞նչ է այստեղ տեղի ունեցել»:

«Ոչինչ», – արագ պատասխանեց տղամարդը:

«Ասում են՝ այստեղ ինչ-որ բան է եղել հայերի հետ», – շարունակեց վարորդը:

Տղամարդը կորցրեց համբերությունը: «Ես չգիտեմ», – մի կերպ ասաց նա և դուրս նետվեց մեքենայից:



\*\*\*

Չսբուշի հայերի կոտորածի վայրն ամենաահավորներից մեկն է: Պատմաբան Ռայմոնդ Գեւորգյանը գրում է.

«Սկզբում սպանում էին տղամարդկանց. կապում էին մի քանիսին, տասից քիչ, այնուհետև դահիճներն սպանում էին նրանց և մարմինները նետում ձորը: Նույնն անում էին կտրում կոկորդը: Նրանցից ոմանք անձամբ էին նետվում անդունդը երեխաների հետ»:

Իր հիշողություններում ամերիկացի միսիոներ Յենրի Ռիզը, որն աշխատել է Խարբերդում, նկարագրում է Դուդանը որպես «հայտնի քարանձավ՝ մի քանի հարյուր ոտնաչափ ուղղահայաց իջվածքով»: «Ասում են՝ քաղաքի ամբողջ բնակչությունն այստեղ է բռնկվել կոտորածի համար»:

Ողջ չի մնացել համարյա ոչ ոք: Ոչ մի հայ, գրում է Զարնիգ (Գառնիկ) Կեւորգյանը Չսբուշի մասին իր գրքում, այդտեղից դուրս չի եկել դեպի Հայկա, Դեր Չոր կամ Արաբիայի այլ մարզեր արյունալի արտաքսման ճանապարհը:

\*\*\*

«Այստեղից մահվան հոտ է գալիս», – ասաց Ջորջը՝ իմ ուղեւորներից մեկը: – «Ես այլեւս այստեղ չեմ դիմանում»: Եւ վերադարձավ մեքենա:

Մենք լուսանկարում ենք, տեսագրում եւ գնում տեղանքը:

Վերադարձի ճանապարհին բուրդ գյուղացին մոտենում է մեզ եւ հարցնում. «Կարո՞ղ եմ ձեզ մի բան խնդրել»: «Խնդրեմ»:

«Իմ տատիկը շատ իրեր է գտել: Նրանք հայերին են պատկանել ...: Դե, գյուղացիներն ասում են, որ իբր նրանք ոսկուց են եղել, սակայն երբ գտել են դրանք, նրանք դարձել են մետաղ»:

Ես շփոթված եմ: «Մի՞թե»:

«Այո, այո: Ասում են նաեւ, որ եթե որեւէ մեկը կարողա դրանց վրայի հայերեն մակագրությունները, դրանք նորից ոսկի կդառնան: Ահա ես էլ ուզում էի ձեզ խնդրել կարողա դրանք»:

«Չեմ կարծում, որ ի վիճակի եմ նման բանի, բայց բերեք»:

«Ես ուզում եմ տեսնել, մենք զգույշ կլինենք», – ասում եմ ուղեկիցներին:

Նստում ենք եւ գնում նրա մեքենայի հետեւից: Մի քանի րոպե անց նա կանգ է առնում դաշտի եզրին: Մի քանի րոպե անց տեսնում ենք դեպի մեզ եկող մի տղամարդու, կնոջ եւ մի քանի երեխաների գործիքներով, պղնձե եւ արծաթե սկուտեղներով եւ կենցաղային ապրանքներով...

### Ասլըհան Քիրամիջյան. կորուսյալ հայուհին Դերսիմի



«Դերսիմի կոտորածի ականատեսներից 80-ամյա հայուհի Ասլըհանը 5-6 տարեկանում հանձնվել էր մի ընտանիքի՝ ստանալով Ֆաթմա անունը և շրջապատի կողմից որպես քուրդ ճանաչվելով: Նա տարիներ անց ի հայտ եկած դերսիմցի կորուսյալ մի հայուհի էր»:

Նման տողերով է սկսում թուրքական ձախաթեյան «Ռադիքալ» պարբերականը Ասլըհան-Ֆաթմայի պատմությունը, ով վերջերս դիմել էր Թուրքիայի Ազգային մեծ ժողով՝ պաշտոնական ներողություն պահանջելով իր տեսած տանջանքների և ցավերի համար:

«Հալիվորի Վանք գյուղում բոլոր մարդիկ սպանվեցին: Փոքրիկ Ասլըհանը կարողացավ «զինված մի մարդու» հետ թաքնվել, սակայն տեսավ գյուղացիների կոտորածը: Կոտորածին հետևեց արքայը: Փոքրիկը Հիսա Քիրամիջյանի և երեք զարմիկների հետ արքայվեց Քոնյա նահանգի Բեյշեհիր շրջան: 5-6 տարեկանում նա դարձավ թուրք Ֆաթմա, իսլամացվեց և ընդամենը 13 տարեկանում

ամուսնացավ: Նրա եղբայրներն էլ թլպատվեցին: Տարիներ ի վեր հայուհի լինելը թաքցնում էին: Հոր Հակոբ անունը դարձավ Էյուփ, Հավաս մայրը՝ Հավա: Մինչ 2010 թվականը բոլորը նրան որպես քուրդ էին ճանաչում, անգամ երեխաները: Ասլըհանը Հալիվոր Վանքի 72-ամյա լռությունը խախտեց, ինչից հետո նրա զավակները սկսեցին ուսումնասիրել նրա արմատները: Նրանք գտան ազգականների, նրա ճակատագիրը կիսած մարդկանց: Կինը պատմում է իր կյանքից, ցույց տալիս վնասված ձեռքերը: Նրան հանձնել էին մի կնոջ, որի ընտանիքը շատ դաժան էր վարվել նրա հետ: Նրանց ծեծից վնասվել էր մատերը: Ավելի ուշ մեկ այլ ընտանիքի հանձնեցին: 13 տարեկանում ամուսնացրեցին 35 տարեկան մի տղամարդու հետ: Սոված-ծարավ մի կյանք ապրեց՝ լի տանջանքներով: Անտեր, անտուն, առանց մեկի ապրեց: Փողոցում մնաց: Երեխաներին այդպես մեծացրեց: «1995 թվականին երեխաներս ասացին, որ հայ եմ», – նշում է կինը՝ վախենալով, որ ասում է՝ հայ է: «2010 թվականին աղջիկս մեր տոհմաձառը կազմեց: Անձնագրում անունս Ֆաթմա է, օրիորդական ազգանունս՝ Քիրամիջյան: Իմացա, որ անունս Ասլըհան է, ազգանունս՝ Քիրամիջյան: Հայրս ծառայել է Հալիվորի Վանքում: Բավական մեծ կարողություն է ունեցել: Նա էլ արքայի ժամանակ է սպանվել: Այժմ Ասլըհան Քիրամիջյանը դիմել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ պահանջելով ներողություն խնդրել իր կրած բոլոր տանջանքների համար, ինչպես նաև հետ պահանջելով հոր ունեցվածքը: Ահա այսպիսին է Դերսիմի կորուսյալ մի հայուհու պատմությունը, գրում է «Ռադիքալը»: Ստորև կարող եք տեսնել նրա լուսանկարներն ու վնասված ձեռքերը.

### Դիարբեքիթում հայերենի դասընթացների մասնակիցները հանդիսավոր կերպով ավարտական վկայականներ են ստացել

Յունիս 21, 2012



Թուրքիայի Դիարբեքիթի Լահանգի Սուրի շրջանի Սշակույթի տանը տեղի է ունեցել հայերեն դասընթացների մասնակիցներին ավարտական վկայականներ հանձնելու հանդիսավոր միջոցառումը: Թուրքական Beyazgazete-ի փոխանցմամբ՝ հանդիսավոր միջոցառմանը մասնակցել են բրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավոր



Ալթան Թանը, Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը, քուրդ գրող Շեյմուշ Դիքենը, հայերենի դասընթացների մասնակիցներն ու բազմաթիվ հյուրեր:

Սուրի քաղաքապետն իր խոսքում թուրքերենով, քրդերենով եւ հայերենով ողջունել է ներկա գտնվողներին՝ շեշտելով, թե սա ընդամենը փոքրիկ բայլ է իրենց պատմական պարտքը վճարելու ճանապարհին: «Մենք դեռ շարունակելու ենք մեր պարտքը վճարել: Մենք շարունակում ենք վերանորոգել հայկական եկեղեցին»,- նշել է Դեմիրբաշը՝ շեշտելով, որ հայերեն դասընթացների բացման համար իրենք քրեական հետապնդման են ենթարկվել:

Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի նախագահ Էրգուն Այըքն իր հերթին նշել է, թե լեզուն էթնիկ հասարակության ամենակարեւոր բաղադրիչներից մեկն է: «Մենք, որպես հայ հասարակություն, ցավոք, վերջին հարյուրամյակում այս խնդրի առաջ ենք կանգնած թե Թուրքիայում, թե Ափյուռքում: Ոչ միայն Թուրքիայում, այլ նաեւ արտասահմանում մեր լեզուն կորցնելու վտանգ կա: Այս խնդրի շուրջ հայ հասարակության առաջադեմ դեմքերը լուծումներ են փնտրում: Թեեւ այս դասընթացները խորհրդանշական են, դրանք շատ կարեւոր երեւոյթ են»,-նշել է Էրգուն Այըքը: Ելույթներից հետո հայերենի դասընթացների 27 մասնակիցներին հանձնվել են ավարտական վկայականներ:

**NEWS.am**-ն ավելի վաղ հայտնել էր, որ 2012-ի մարտին Դիարբեքիի Սուրի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել են հայերենի եռամսյա դասընթացներ: Բացի այդ, Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը թուրքերենով եւ հայերենով հրատարակել է հայկական մի շարք հեքիաթներ, այդ թվում Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»: Դեմիրբաշի նախաձեռնությամբ նաեւ Դիարբեքիի Ներկայացնող տուրիստական ուղեցույցը տպագրվել է նաեւ հայերենով: Սուրի շրջան մտնող ճանապարհների մոտ դրված ցուցանակների վրա կա նաեւ հայերենով գրված «Բարի եկաք» գրությունը:

Թուրքական իշխանությունների կողմից ավերված Մալաթիայի գերեզմանատան վերականգնումը սկսվել է



Թուրքիայի Մալաթիայի քաղաքապետարանի կողմից 2012-ի փետրվարի 2-ին քանդված Մալաթիայի

հայկական գերեզմանոցում կառուցման փուլում գտնվող պահակատան եւ հանգուցյալներին վերջին հրաժեշտի համար նախատեսված շենքերի կառուցումը սկսվել է: Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Մալաթիայի քաղաքապետարանի կողմից հայտարարված տեղեկերը շահած շինարարական ընկերությունն արդեն սկսել է շինարարական աշխատանքները: Տեղեկերը շահած ընկերությունը պարտավորվել է 156 հազար լիրայով կառուցել Մալաթիայի հայկական գերեզմանատան պահակատունը եւ հանգուցյալներին վերջին հրաժեշտի համար նախատեսված շենքերը:

Նշենք, որ փետրվարի 2-ին Մալաթիայի քաղաքապետարանի հանձնարարությամբ քանդվել է Մալաթիայի հայերի գերեզմանոցում կառուցվող պահակատունն ու մատուռը: Այս դեպքը բողոքի ալիք էր բարձրացրել Թուրքիայում եւ Թուրքիայից դուրս, որից հետո Մալաթիայի քաղաքապետը պնդել էր, թե շինությունները սխալմամբ են քանդել եւ խոստացել պետության հաշվին վերականգնել վնասը:

## Թուրքիայի նախկին նախագահը Մեծ Եղեռնի հարցով հատուկ ծրագրեր է ունեցել

*Թուրքական մամուլում այսօր հայտնվել է ուշագրավ մի հոդված, որում պատմվում է, թե ինչպես է պատրաստվել լուծել Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի ութերորդ նախագահ Թուրգութ Օզալը:*



Վերջինս նախագահի պաշտոնը զբաղեցրել էր 1989 թվականին, իսկ 4 տարի անց մահացել խիստ կասկածելի հանգամանքներում: Օզալի նախագահության ժամանակ Թուրքիայի կրթության նախարարի պաշտոնը զբաղեցրած Վեհբի Դինչերերն ու նախագայի այլ համախոհները թուրքական «Աքսիյոն» հանդեսին պատմել են, թե Օզալն ինչ քայլեր է փորձել ձեռնարկել Մեծ Եղեռնի հարցում: Օզալը իշխանավարության տարիներին մի շարք հանդիպումներ է ունեցել հայկական Սփյուռքի ներկայացուցիչների հետ, երբ նա արտասահմանյան այցեր է կատարել: Մասնավորապես, Օզալը հաճախ է շփումներ ունեցել հայ համայնքի ներկայացուցիչների հետ ԱՄՆ կատարած այցերի ժամանակ: Օզալը փորձել է նաև բաց քննարկման դնել Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայում, սակայն

բավական մեծ թվով հակառակորդներ է ունեցել այս գաղափարի դեմ, իսկ վաղաժամ մահը խանգարել է ի կատար ածել այս ծրագրերը: Օգալը ցանկացել է կազմել մտավորականների մի խումբ, որը պետք է ուսումնասիրեր Հայոց ցեղասպանության հարցն ու այն դներ ընդհանուր քննարկման: Թուրք նախագահը նախատեսում էր նաև բացել կառավարության բոլոր արխիվները:

Հետաքրքրական է նաև Թուրքիայի ութերորդ նախագահի «Վան» անունը կրող ծրագիրը: Ըստ այդ ծրագրի՝ նախատեսված է եղել Ցեղասպանության ժամանակ բռնագաղթված հայերին վերադարձնել Վանում նրանց ունեցած անշարժ գույքն ու ապահովել նրանց բնակությունն այդտեղ: Այս ծրագիրը, սակայն, նույնպես կյանքի չի կոչվել: Հիշեցնենք, որ ապրիլի 24-ին լրանում է Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցը: Թուրքիան դեռ շարունակում է ժխտել մարդկության դեմ այդ մեծագույն ոճիրը:

### **Թուրքիայի նախկին նախագահին սպանողը գտնվում է Ադրբեջանում. Չեկույց**

Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրգութ Օզալի մահվան գործով Պետական վերահսկիչ խորհրդի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում սկանդալային մանրամասներ են հայտնվել: Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Պետական վերահսկիչ խորհրդի ներկայացրած զեկույցում նշվել է, թե 1998-ին 24 TC 245 պետհամարանիշով մի մեքենա մտնեցել է Օզալի տանը: Մեքենայից դուրս եկած անձը ներկայացրել է Շեհրիյար Փուրնովազ անունով եւ ցանկացել է հանդիպել Օզալի կնոջ՝ Մեմրայի հետ: «Այդ ժամանակ տիկին Մեմրան տան չի եղել: Անձանոթը թողել է գրություն, որի մեջ գրված է եղել. «Թուրգութ Օզալին սպանել են Գլիկոնտրինաիդ կոչվող դեղամիջոցով: Մարդասպանը գտնվում է Ադրբեջանում, անունը՝ Հասան Ալիօղլու»: Գրության մեջ եղել է նաև այն հյուրանոցի հասցեն, որտեղ իջեւանել է անձանոթը: Ավելի ուշ, Օզալի կնոջ թիկնապահները գնացել են այդ հյուրանոց եւ նման անձի այնտեղ չեն գտել: Հայտնի է դարձել, որ նման անունով մարդ օրինական ճանապարհով Թուրքիա չի մտել», -մեջբերել է զեկույցից մի հատված Haberler-ը: Նշենք, որ Թուրքիայի 8-րդ նախագահ Թուրգութ Օզալը 1993-ին կասկածելի պայմաններում է մահացել: Նրա կինը պնդում է, որ իր ամուսնուն թունավորելով են սպանել:

Հիշեցնենք, որ մի շարք թուրք դիվանագետներ պնդում են, թե ժամանակին Թուրգութ Օզալը ցանկացել է լուծել Հայոց ցեղասպանության հարցը եւ նույնիսկ հետքերով պաշտոնյաներից, թե Ցեղասպանության ճանաչման դեպքում Թուրքիան որքան փոխհատուցում է վճարելու:

### **Թուրքիայում հերթական հայկական եկեղեցին է վերածվել աղբանոցի**



Թուրքիայում հայկական եկեղեցին վերածվել է գյուղի աղբանոցի: Բաթման նահանգի Ենիփրնար գյուղում (հայտնի նաև Քեֆերգո անունով) գտնվող հայկական հինավուրց եկեղեցում այժմ ամենուր աղբ է: Գյուղացիները չեն դադարում եկեղեցու քարն օգտագործել շինությունների կառուցման համար: Այն կանգնած է վերջնական ոչնչացման առաջ: «Մա մեր գյուղի միակ պատմական հուշարձանն է: Պիտի ամաչենք, թե ինչի ենք այն վերածել», -նշում է գյուղացիներից մեկը: Հայկական եկեղեցին և շրջակայքի վանական համալիրը կառուցվել են 11-րդ դարում: HayNews.am

### **Սասունի հայերը Թուրքիայում դատական հայց են ներկայացրել՝ իրենց գյուղը հետ ստանալու համար**

Ներկայումս Թուրքիայի տարածքում գտնվող Սասունի շրջանի հայկական Աջար գյուղը 1986-ին լքած 17 հայ դիմել են դատարան՝ հետ ստանալու իրենց գյուղը: Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Սասունի դատարան ներկայացրած հայցադիմում հայերը նշել են, որ 1986-ին շրջանում ահաբեկչական գործողությունների պատճառով ստիպված հեռացել են գյուցից, որից հետո հարեւան գյուղերի բնակիչները տիրացել են իրենց գույքին:

Հայերը նշել են, որ գյուղում գտնվող իրենց սեփականությունների փաստաթղթերն առկա են: Աջար գյուղում տեղավորված քրդերի փաստաբանը նշել է, թե գյուղացիներն այդ հողերն ու շինությունները գնել են: Փաստաբանը պնդել է, թե առուվաճառքի ակամատեսներ կան, ովքեր պատրաստ են վկայություն տալ դատարանում:

Դատարանն ապացույցներ ներկայացնելու համար կողմերին մինչեւ մայիսի 4-ը ժամանակ է տվել:



**Սփյուռք**

**Թբիլիսիում հայկական եկեղեցի է փուլովել**



*Վրաստանի մայրաքաղաքում փուլովել է հայկական եկեղեցի:*

Երկուշաբթի գիշերը Թբիլիսիի կենտրոնում փուլովել է 18-րդ դարին կառուցված հայկական եկեղեցի: Այս մասին հայտնում է «Վզգյադ» կայքը: Նշվում է, որ եկեղեցին գտնվում էր վթարային վիճակում: Վրաստանի Ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների վարչությունից հայտնում են, որ փլուզման պատճառը եղել են հորդ անձրևները: Հիշեցնենք, որ նախօրեին Վրաստանում ջրհեղեղի հետևանքով մահացել է 5 մարդ, այդ թվում 2 երեխա:

**Միջազգային**

**1915 թվականը ցեղասպանություն էր. թուրք իրավապաշտպանների ցույցը**



*Թուրքիայում իրավապաշտպաններն հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:*

Ինչպես տեղեկացնում է թուրքական «Բիանեթ» ցանցը, թուրք իրավապաշտպանները կեսօրին հավաքվել են Ստամբուլի Թուրքական իսլամական թանգարանի առաջ. այս վայր որպես բանտ է ծառայել Մեծ Եղեռնի տարիներին: Ցուցարարների առաջ դրված է եղել «1915-ը ցեղասպանություն էր: Ցեղասպանությունը մարդկության դեմ ոճիր է» տողերով պաստառ, իսկ նրանց ձեռքերում

եղել են 1915 թվականի ապրիլի 24-ին ձերբակալված հայ մտավորականների նկարները: Ցույցից հետո նրանք քայլել են դեպի փոստային բաժանմունք և նամակներ են ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին և Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա-ին: Նամակում նշվել է, որ «հայկական կաթողիկոսարանների տեղն այդ տարածքներում է»:

**Ադրբեջանին զայրացրել է, որ ռուսական նախագծում Ղարաբաղն ու հարակից տարածքները ներառված են Հայաստանի կազմում**



News.am 26-11-2009- Բազմալեզու [www.franklang.ru](http://www.franklang.ru) ռուսական կայքէջում այդ նախագծի հեղինակ Իլյա Ֆրանկը պատկերել է Ադրբեջանը առանց Ղարաբաղի և հարակից շրջանների: Դրանք ներառված են Հայաստանի քարտեզում: Այս փաստը խիստ զայրացրել է Ադրբեջանին, և մասնավորապես «Բաքիլիլար.ազ» կայքը պահանջել է իշխանություններից շտապ միջամտել և ուղղել այդ սխալը: Հիշեցնենք, որ վերջերս ադրբեջանական կողմին զայրացրել էր, որ Euronews-ի եղանակի տեսության ժամանակ ընդհանրապես Ադրբեջանը չէր հիշատակվում: Բազմաթիվ բողոքներից հետո, հեռուստաալիքը Ադրբեջանը ներառեց ասիական երկրների շարքում, այն դեպքում, երբ Հայաստանն ու Վրաստանը եվրոպական երկրների շարքում են ընդգրկված:

**Իրանի հարավում գտնվող երեք կզիները կընդգրկվեն նոր կազմավորվող Պարսից ծոց նահանգում**



Panorama.am. 23-4-2012- Իրանի հարավում գտնվող երեք կզիները կընդգրկվեն նոր կազմավորվող Պարսից ծոց նահանգում: Այդ մասին հաղորդում է իրանական «ՖԱՐՄ» լրատվական գործակալությունը: ԻԻՀ Մեջլիսի

ներքին քաղաքականության հարցերով հանձնաժողովի անդամ Վալի Էսմայիլին «ՖԱԸՄ»-ին տված հարցազրույցում նշել է, որ պատգամավորների նախաձեռնությամբ՝ մշակվել է օրենքի նախագիծ, համաձայն որի՝ նախատեսվում է Պարսից ծոցում գտնվող Աբու Մուսա, Թոնբ-է բոզորգ, Թոնբ-է քուչեք կղզիները միավորել և ընդգրկել նոր Պարսից ծոց անունը կրող զբոսաշրջային և մշակութային նահանգում: Նկատենք, որ Իրանին պատկանող վերոնշյալ կղզիների առնչությամբ որոշակի տարաձայնություններ կան Իրանի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև: Օրերս երբ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադն այցելել էր Աբու Մուսա կղզի, ԱՄԷ-ի արտգործնախարարն այդ առնչությամբ իր դժգոհությունն էր հայտնել: Իրանական ԶԼՄ-ների հաղորդմամբ՝ ի պատասխան ԱՄԷ-ի ԱԳ նախարարի հայտարարության, ԻԻՀ ԱԳՆ մամլո խոսնակ Ռամին Մեհմանփարաստը հայտարարեց, որ Աբու Մուսա, Թոնբ-է բոզորգ, Թոնբ-է քուչեք կղզիները հանդիսանում են Իրանի անբաժանելի մասը, իսկ ԻԻՀ բանակի ցամաքային ուժերի հրամանատար Ահմադ Ռեզա Փուրդասթանն էլ հայտարարեց, որ եթե խնդիրը չլուծվի դիվանագիտական ճանապարհով, ապա Իրանի զինված ուժերն ի գործու են իրենց իրավունքը պաշտպանել ռազմական ուժի միջոցով:

**Թուրք ազգայնականները գազազել են ապրիլի 24-ը սգո օր նշելու առաջարկից**



*Քուրդ խորհրդարանականների նախաձեռնությունը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ը, Թուրքիայում սգո օր հայտարարելու վերաբերյալ, արդեն սուր արձագանքների պատճառ է դարձել:*

Թուրքիայի խորհրդարանի միակ քրդական ուժից՝ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունից պատգամավոր Սըրը Մուրեյա Օնդերն օրերս մեջլիսում հայտարարել էր, որ իրենք պատրաստվում են ապրիլի 24-ը Թուրքիայի տարածքում որպես սգո օր նշելու օրենքի նախագիծ ներկայացնել: Ինչպես տեղեկացնում է թուրքական «Զաման» պարբերականը, քուրդ պատգամավորների այս նախաձեռնությանը խիստ բացասական են ընդունել ազգայնական խորհրդա-

րանականները: «Ազգայնական շարժում» կուսակցությունից պատգամավոր Օքթայ Վուրալը խորհրդարան է բերել լուսանկարներ, որոնց վրա պատկերված են եղել մահացած երեխաներ: «Եթե կոտորած եք ուզում տեսնել, ահա «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) արած գործերը: Նկարներում պատկերված են նրանց կողմից սպանված երեխաները»,- հայտարարել է թուրք ազգայնական պատգամավորը: «Դուք այս ազգի՞ն ուզում եմ ցեղասպան դարձնել: Ո՞վ եք դուք: Ձեր չափն իմացեք»,- հավելել է Վուրալը: Նշենք, որ Թուրքիայի վարչապետ Թայիփ Էրդոդանն ու այլ բարձրաստիճան պաշտոնյաներ մշտապես ակնարկում են, թե «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը կապեր ունի PKK-ի հետ:

**Թուրք դասախոս. Առանց վարանումի կարող եմ խոսել Հայոց ցեղասպանության մասին**



Առանց վարանումի կարող եմ խոսել Հայոց ցեղասպանության մասին, քանի որ 1 մլն-ից ավելի մարդկանց սպանությունը, այլ բառով դժվար է սահմանել: Այս մասին, այսօր՝ հունիսի 20-ին, Երեւանում կայացած «փորձենք հասկանալ Թուրքիային» քննարկման ժամանակ հայտարարել է Թուրքիայի Բելգի համալսարանի դասախոս Մուրադ Բելգեն: «Ցեղասպանությունը բարդ երևույթ է, որը ծանր մեղադրանքներ է առաջ բերում»,- նշել է Բելգեն: Հարցին ի պատասխան, թե հնարավոր է նա հայկական ծագում ունի, Բելգեն հավաստիացրել է, որ ինքը մաքուր թուրք է, երկու տատերն էլ չերթեզ են եղել: «Սակայն, ո՞վ կարող է հստակ իմանալ, թե ինչ է տեղի ունեցել 12 սերունդ առաջ: Ամեն ինչ հնարավոր է: 1915 թ. այն թուրքերը, որոնք սպանում էին հայերին, միայն այն բանի համար, որ նրանք հայ են, հնարավոր է նրանց մի մասի մոտ էլ հայկական արյուն կար, որի մասին նրանք չէին էլ իմանում»,- ասել է թուրք դասախոսը: Անդրադառնալով այն փաստին, որ Թուրքիայի կառավարությունը վերականգնում է Աղթամարի Մուրբ Խաչը, կամ Անիի եկեղեցիները, առանց նշելու, որ դրանք հայկական են, Բելգեն նշել է, որ դա պետական մակարդակով իրականացվող ազգայնամոլության

դրսեւորում է: Նա այս հարցի կապակցությամբ հիշեց Մերի Շելլիի Ֆրանկենշտեյնի վեպը, որի գլխավոր հերոսը բարի ցանկություններից դրդված փորձեր է կատարում, ինչի արդյունքում, սակայն հրեշ է կենդանացնում:

«Ինձ համար այդ հրեշը ազգայնամոլությունն է, որը դառնում է անկառավարելի եւ ինքն է սկսում ղեկավարել իր արարչին: Թուրքիայի իշխանությունը փորձում է դրական գործ կատարել, վերականգնում է հայկական հուշարձանները, սակայն այն մարդը, ով պարտավոր է տեղադրել ծագման մասին ցուցանակը հուշարձանի վրա, ազգայնամոլական գաղափարներից դրդված՝ չի գրում դրանց հայկական ծագման մասին: Դա անպատասխանատվություն է՝ վախեցած անձանց արարք»,- ասել է Բելզեն:

Թուրք ժողովրդի մեջ նման վարքը, Բելզեի խոսքով, ձեւավորվել է 1915թ.-ից հետո, երբ Յեղասպանությունից հետո Թուրքիան պատասխանատվության չենթարկվեց: Ավելին, Թուրքիայի իշխանությունն ամեն կերպ հերքել է և հերքում է այդ իրադարձությունները, եւ այժմ, երբ չկա տեղեկատվական շրջափակում, այդ տեղեկություններն անհանգստություն են առաջացնում ազգայնականների շրջանում:

**Թուրքմենստանը կղիմի ՄԱԿ-ի դատարան՝ Ադրբեջանի հետ վիճելի հարցերի լուծման համար**

Հունիս 30, 2012 | 11:13

Թուրքմենստանը մտադիր է դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան՝ Ադրբեջանի հետ Կասախից ծովի նավթահանքերի շուրջ առկա վեճը լուծելու համար:

Այդ մասին Թուրքմեն պետական լրատվական ծառայության հետ հարցազրույցում հայտնել է Թուրքմենստանի նավթագազային արդյունաբերության եւ հանքային ռեսուրսների նախարարի տեղակալ Կակագելդի Աբդրախեյբ:


Հարցազրույցում նշվում է, որ վերջին օրերին ադրբեջանական մամուլում հայտնված այդ երկրի պաշտոնյաների տեսակետները քյափազ (Մերդար) հանքավայրում Թուրքմենստանի անցկացրած հետազոտությունների վերաբերյալ միակողմանի են եւ հարցի իրական վիճակը չեն արտացոլում: Աբդրախեյբ նշել է, որ 2008թ. Թուրքմենստանի նախագահ Դուրբանդուլի Բերդիմուխամեդովի Ադրբեջան կատարած այցի ընթացքում երկրների միջեւ ոչ մի համաձայնագիր չի ստորագրվել: Միաժամանակ, Թուրքմենստանը որոշ քայլեր է նախաձեռնել հարցի լուծման ուղղությամբ, սակայն ադրբեջանական կողմից արձագանք չի ստացվել: Հարցազրույցում ասվում է, որ անորոշ իրավասության տակ գտնվող գոտում AIOC կոնսորցիումի անցկացրած աշխատանքները չեն համապատասխանում միջազգային իրավունքի նորմերին: Չգտելով քողարկել իր ապօրինի գործողությունները վիճելի տարածքներում, ադրբեջանական կողմը ձգտում է իրեն ներկայացնել իբրեւ իրավացի, միաժամանակ խախտելով լրացուցիչ պայմանավորվածությունները եւ, - նշում է Աբդրախեյբ:

,Մտեղծված իրավիճակում Թուրքմենստանին ոչինչ չի մնում, քան ՄԱԿ-ի միջազգային դատարան դիմելը,- ասել է նա՝ նշելով, որ Մերդարի հանքավայրն ամբողջությամբ գտնվում է Կասախից ծովի թուրքմենական հատվածում:

News.am

**Շասարակական**

**Մենք հաղթեցինք պատերազմում, որը մենք չէինք սկսել**



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ, ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության տիար Մերժ Մարգարյան, Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության տիար Բակո Սահակյան, Վաստակյալ նախագահներ տիար Ռոբերտ Քոչարյան և տիար Արկաղի Դուկասյան, Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապատիվ հոգևոր հայրեր, Հարգարժան պետական այրեր, Սիրելի հավատավոր ժողովուրդ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից պատվական հյուրեր անհուն ուրախությամբ եկել ենք Հայրապետական Մեր օրհնությունը բերելու և խնդակից լինելու ձեզ Մայիսի 9-ի այս լուսավոր, բերկրանքով ու քաջալերությամբ լեցուն օրը, երբ տոնում ենք Երկրորդ համաշխարային պատերազմի հաղթանակը, Շուշիի ազատագրության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի 20-ամյա հոբելյանները: Եկել ենք շնորհավորելու և Մեր գնահատանքը բերելու ձեզ, մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության, մեծարգո Նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, հայոց պետական այրեր, սիրելի հաղթանակած ժողովուրդ՝ Մեր հավատավոր զավակներ Արցախի, Հայաստանի և Սփյուռքի: Մեր շուրթերին այս պահին սաղմոսերգուի օրհներգն է, որ որպես աղոթք՝ բարձրացնում ենք առ Տերը՝ ասելով. Քո երեսի լոյսը ծագեց մեզ վրայ, եւ ուրախութիւն տուեցիր մեր սրտերին (Սղմ. Դ 7-8): Շուշիի ազատագրումով Աստծո արդարության լոյսը փայլեց մեր կյանքում՝ լիառատ ուրախությամբ համակելով սրտերը մեր ժողովրդի և առատացնելով հույսերը պատերազմի հաղթական ավարտի: Այսօր լռել են պատերազմի ձայները: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ նորոգված ու նորաշուք եկեղեցու զանգակատան բարձունքից հրեշտակները հնչեցնում են օրհներգության փողը հաղթանակի ու խաղաղության, հնչեցնում են շեփորն ազատ կյանքի և արդար իրավունքի, որը երբեք և ոչ մի ժամանակ չլռեց մեր ժողովրդի հոգում: Ազատ ապրելու այս ոգով է գրվել մեր դարավոր հերոսական պատմությունը: Այս ոգով մեր



ժողովուրդը, այդ թվում՝ Արցախի քաջարի զավակները, իր արժանի մասնակցությունն ու մեծ ավանդն է բերել Երկրորդ աշխարհամարտում՝ պայքարելով ազգերի լիիրավ ու խաղաղ կյանքի համար: Այսօր ազգս հայոց՝ նույն ոգով հաղթանակած Արցախյան ազատամարտում՝ տերն է իր արդար իրավունքների: Դժվարին, բայց հույսով, հավատքով ու տեսիլքով լեցուն ուղի ենք անցել, սիրելիներ: Մենք հաղթեցինք պատերազմում, որը մենք չէինք սկսել: Այդ պանծալի հաղթանակը մեր ժողովուրդը կերտեց հերոսական մաքառումով, անհամար զոհողություններով, հավատավոր և հայրենանվեր հոգու արիության: Արցախով գորացան սրտերը աշխարհասփյուռ մեր ժողովրդի, և համախմբվեց ազգս՝ մեկտեղելով իր ուժերն ու հնարավորությունները հանուն Արցախի պաշտպանության և հայրենի պետականության ազատ ու բարօր կյանքի: Արդարև, Արցախի այս հողն ու երկիրը, որ մի բուռ տարածքն է պատմական մեր Հայրենիքի, վերջին երկու տասնամյակի իր պատմությամբ վկայությունն է բերում մեր ժողովրդի հայրենասեր ու ազգանվեր հոգու, վճռական կամքի. հաղթական բազկի, միասնականության և համատեղ ջանքերի արդյունավորման: Փառք և գոհություն Աստծո, այսօր Հայաստանի և Սփյուռքի կողքին օր օրի շենանում է Արցախը, լցվում բարեբեր ու խնդառատ կյանքով: Համայն մեր ժողովրդի աջակցությամբ, արդար վաստակով, արցախահայության ջանք ու նվիրումով բարձրանում են դարավոր վանքերն ու եկեղեցիները, նորոգվում ու պայծառանում հոգևոր, գիտակրթական ու մշակութային կյանքը: Կառուցապատվում և նոր կյանքով է լցվում նաև Շուշին՝ պատմական ծաղկուն քաղաքն Արցախի: Ազատ Արցախում ծնված սերունդն այսօր կյանք է մտնում պայծառ գալիքի նոր տեսլականով: Այս ձեռքբերումներն ու արդար հույսերը առավել պարտավորեցնում են մեզ հայրենակերտումի նոր սխրանքների: Սիրելի ժողովուրդ հայոց, Աստծո լույսն ու օրհնությունն են ծագել մեզ վրա, ունենք գլխավորը՝ մեր Հայրենիքի ազատությունը: Մեր հույսն առ Աստված, հավատքով զինված, քրիստոնեական արժեքներին, մեր Սուրբ Եկեղեցուն հավատարիմ՝ կառուցենք վաղվա լուսավոր օրը: Դեռևս քիչ չեն դժվարություններն ու խնդիրները: Մեր կյանքի հրամայականներին պիտի դիմագրավենք և բոլոր խոչընդոտները պիտի հաղթահարենք Հայրենիքի հանդեպ նույն սիրով ու պատասխանատվությամբ, լավագույն ծառայությամբ ու հայրենանվեր ազնիվ գործերով, որոնցով և ձեռք են բերվել մեր հաղթանակները: Թող մեզ գորացնեն ազատության և հայրենի պետականության վերահաստատման մեր անցած ուղին, նաև՝ հզոր և միասնական Հայրենիքի մեր իղձերն ու տեսիլքները, մեր զավակների, մեր ժողովրդի լուսավոր գալիքի հույսերը, որպեսզի ամեն ժամ ապրենք ու գործենք դրանք մարմնավորելու աներկբա կամքով՝ միասնական ջանքերով հաղթանակի առաջնորդելով նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

միջազգային ճանաչումը: Անվարան ու հաստատուն ընթանանք Տիրոջ ճանապարհներով, և Նա այնպես կանի,- ինչպես օրհներգում է սաղմոսերգուն,- որ արդարությունը երեւայ, ինչպես լոյս, եւ իրաւունքը՝ ինչպես ցերեկ (Սղմ. Լ, 9 6): Սիրելիներ, Արցախի նվիրական հողից Հայրապետական Մեր աղոթքը առ Աստված բարձրացնելով, հայցում ենք, որ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ պահպանի մեր Հայրենիքը, մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի և հանապազ օրհնի ազգիս՝ մարմնավորելու մեր իղձերն ու մեր լուսավոր գալիքը: Մեր աղոթքն ենք բարձրացնում երկինք հոգիների համար Արցախյան ազատամարտում և Երկրորդ աշխարհամարտում զոհված մեր զավակների և բոլոր նրանց համար, ովքեր իրենց կյանքով կերտեցին հաղթանակը: Փառք, բյուր հազար փառք, աշխարհասփյուռ ազգիս հայոց: Փառք Արցախի հերոսական ժողովրդին, Պաշտպանության բանակին: Փառք ու կրկին փառք Հայրենիքը պաշտպանողներին, գորացնողներին և շենացնողներին: Թող միշտ ապրեն նրանց բարի գործերը և ներշնչեն նոր արարումների, թող սերնդեսերունդ հիշվեն նրանց պանծալի անունները

Նոր աչքս բաց էի արել, գլխներիս թուրքը  
խփեց, հագիվ կարողացել ենք փախչել.  
Ցեղասպանության ականատես



98-ամյա Ռոզա Խոնդկարյանը 1914-1922թթ. Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած ջարդերի կենդանի վկան է, ով անուղղակի եւ ուղղակի կերպով իր վրա զգացել է արյունալի ջարդերի հետեւանքները (Ֆոտոռեպորտաժ): Նախ, կորցրել է մոր հարազատներին, ապա թողնելով Իգդիրում ունեցած ամբողջ հարստությունը, հայրենի տունը, ընտանիքով բռնել են գաղթի ճանապարհը, որի ժամանակ էլ մահացել է քույրը: Ռոզա Խոնդկարյանը ծնվել էւ ապրել է Իգդիրում, ուներ երեք եղբայր եւ մեկ քույր, սակայն 4 տարեկանում ստիպված բռնել են գաղթի ճանապարհը: «Ի՛նչ պիտի հիշեմ, նոր աչքս բաց էի արել, գլխներիս թուրքը խփեց, հագիվ կարողացել ենք փախչել: Եկան, թե փախեք, շուտ արեք, թուրքը գալիս է, մոտեցել է Իգդիրին, ասացին՝ ինչքան կարաք, շուտ արեք: Մեր տան ծառայողը ինձ գրկեց, վազելով առաջ ընկանք, եկանք», - անցյալի վերհուշը վերականգնելով՝ պատմեց Ռոզա Խոնդկարյանը: 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած դեպքերը Ռոզա Խոնդկարյանը լավ չի հիշում, եղածներն էլ ժամանակագրությամբ եւ դեպքերի ընթացքով խառնում է իրար, սակայն այդ ջարդերի հետեւանքները

Եւ կորուստները կրում է մինչ այժմ: Ջարդերի ժամանակ կոտորվել են Ռոզայի մոր հարազատները, նրա հայրը եւս շուտ է մահացել (Լուսանկարում` Գեղամ Խոնդկարյան եւ Լուսաբեր Ավագյան): Թերեւս դա էր պատճառը, որ նրա մայրը չէր սիրում խոսել տեղի ունեցած դեպքերի մասին, ամեն անգամ նոր ցավով եւ վշտով էր հիշում ապրածը, երեխաների մոտ ընդամենը նրա խոսքերից մեկն էր տպավորվել, երբ բարկացնում էին, ասում էր` «Դու հո թուրք չե՛ս»: Ցեղասպանություն տեսած կնոջ եղբայրը գնացել է պատերազմ եւ անհետ կորել: Նա բազմաթիվ նամակներ է գրել, փնտրել է եղբորը, սակայն ապարդյուն: «Թե ինչ պատահեց ախպարս, չգիտեմ, տենց էլ կորցրեցի, չկա», - պատմեց նա: Ջարդերի ժամանակ նրա մորական կողմը` Ավագյանները, գաղթել են ԱՄՆ, իսկ հորական կողմը` Խոնդկարյանները` Հայաստան: Թողնելով Իգդիրում տարիներով կուտակած հարստությունը` 1918թ Երեւան գաղթելու ճանապարհին նրա 6-ամյա քույրը` Հեղինեն, մահացել է, ում թաղել են հենց ծառի տակ, հավանաբար չէր դիմացել գաղթի ճանապարհի դժվարություններին: Այդպիսով, Խոնդկարյանների 6 հոգանոց ընտանիքը Երեւան է հասել արդեն 5 հոգով` ծնողները եւ 3 երեխաները, իսկ փոքր եղբայրը ծնվել է գաղթից հետո` Երեւանում: Ցեղասպանություն տեսած կնոջը չեն ասել եղբոր մահվան մասին: Ռոզա Խոնդկարյանը երկու որդի էլ մեկ դուստր ունի, որդիները մահացել են: Արդեն տասը տարի է` նրան պահում է 71 ամյա դուստրը, ով իր վրա է վերցրել բոլոր հոգսերը, տան տղամարդկային եւ ոչ տղամարդկային գործերը: Ցեղասպանության ականատես 98-ամյա կինը չի կարողանում քայլել, հիպերտոնիկ հիվանդ է, ժամանակ առ ժամանակ հիշողության կորուստ է ունենում եւ այլն: Դստեր հետ նրանք ապրում են թոշակով` մի կերպ ծայրը ծայրին հասցնելով: Չնայած պայմաններին, մայր ու աղջիկ չեն սիրում բողոքել եւ խոսել հոգսերից, ինչպես ինքը նշեց, «փորձում են յուր գնալ»: Ապրում են միայնակ, բարեկամների մեծ մասը կամ մահացել է, կամ տարիքով մեծ է, կամ էլ Հայաստանում չէ, պետության հոգածությունը եւս չեն զգում: «Ո՞ւր է պետությունը, պետությունը նա է, ով հոգ է տանում իր ծերերի եւ մանուկների մասին», - նշեց դուստրը:

*Պատրաստեց` Ինգա Մարտինյանը*

### Դաշնակցականները Իրանում փորձում են խլել Հ.Բ.Ը.Մ.-ի աշխատող դպրոցները

Իրանի պետական շրջանակների, մամուլի եւ հանրային կարծիքի մօտ Մեծի Տանն կլիկիկոյ կաթողիկոս Արամ Ա. վեհափառին Ամենայն հայոց կրօնապետ անւանելով Հայ առաքելական եղեղեցու նկատմամբ Հ.Յ.Դ.-ի սաղրիչ գործունեությունից յետոյ, Դաշնակցությունը անցնող մեկ ամսւայ ընթացքում հետեւողական փորձեր է կատարում Թեհրանի Հայկական Բարեգործական Ընդհանուր

Միություն (Հ.Բ.Ը.Մ.) «Մարի Մանուկեան» աղջկանց միջնակարգ եւ «Նարդ Գիլբենկեան» տղայոց տարրական դպրոցները իրեն ենթակայ դարձնել:

Դաշնակցության գովքը թմրկահարող իրանահայ «Հայելի» կայքէջը, Յունիս ամսւայ ընթացքում, Վ. Մ. կրճատուած ստորագրութեամբ, անյարգական եւ զրպարտիչ գրութիւնների շարան է տպագրել, Թեհրանում, տասնամեակների ընթացքում, հազարաւոր շրջանաւարտներ պատրաստած Հ.Բ.Ը.Մ. «Մարի Մանուկեան» դպրոցի հասցէին, դպրոցի կրթական մակարդակը հարցականի տակ առնելով, տեսչութեան եւ ուսուցչական կազմի գիտելիքների պաշարը անբաւարար համարելով եւ աշակերտների ծնողներին ընդվզումի, ընդհուպ մինչեւ իրանական կրթական նախարարութեան մօտ բողոքի մղելով:



Կայքէջը, անտեսել է, համայնքում յայտնի այն փաստը, որ թեհրանահայ միջնակարգ դպրոցներում սովորող հայ աշակերտներից ամենաշատը համալսարան են ընդունել «Մարի Մանուկեան» դպրոցից, որի մասին խոստովանել է նոյնիսկ Թեհրանի դաշնակցական պաշտօնաթերթը` հիմք ընդունելով Թեհրանի Հայոց Թեմի (Թ.Հ.Թ.) Կրթական խորհրդի տւեալները:

«Հայելի» կայքէջը, Յունիսի 11-ին, 12-ին եւ 13-ին անհամեստօրէն եւ ապերախտաբար Հ.Բ.Ը.Մ.-ի, «Մարի Մանուկեան» դպրոցի Ծնողական խորհուրդի, ուսուցչական կազմի եւ տեսչութեան հասցէին գրել է.

«Հայկական դպրոցներից հիմա շատ քննարկւող ու յատկապէս մեր դպրոցական աղջիկների ոչ հայկական դպրոց ուղարկել սպառնացողներից մէկը Մարի Մանուկեան դպրոցն է` դպրոցի մակարդակի և տեսչութեան պատճառով»: <http://www.hyeli.net/index.php/kt/2340///>

«Անցեալ տարւանից էր խօսուում, որ ուսուցիչների մակարդակը ցածր էր, տեսուչը բաւարար կերպով չէր կատարում իրեն յանձնարարուած աշխատանքը: Այդ առիթով տեղի ունեցան տարբեր հանդիպումներ և եզրակացութիւնը եղաւ այն, որ նոր տեսուչ պիտի նշանակուի: Որոշումն իրականացւեց յոյս ունենալով, որ

կը փոխի ամեն ինչ, բայց այս նոր պայմաններում՝ էլի դժգոհություններ ծնողների կողմից և էլի անտարբերություն...»:

«Օնոդական խորհուրդը կարող է նոյնիսկ դիմում կատարել Կրթադաստիարակության նախարարության պատկան կենտրոն՝ ուսուցչի կամ որևէ պաշտօնեայի փոփոխության համար: Մարի Մանուկեան դպրոցի պարագային, նման որևէ գրության կամ նամակի մասին տեղեկություններ չկան, ինչը զարմանալի է, յատկապես երբ շրջող դժգոհությունների մեծ մասը հենց ներկայ տեսուչի գուծունեության մասին են»:

<http://www.hyeli.net/index.php/kt>  
«Դպրոցի համար պատասխանատու Հայ բարեգործական ընդհանուր միությունը, պաշտօնեաները և Օնոդական խորհուրդը չկարողացան ելքեր գտնել, երևի որովհետև իրաքանչիւրը իր ակնոցով է նայում դժարություններին և արդիւնքի չեն հասնում»:

«Ինչու՞ պիտի հասնենք այս մակարդակի, որ ծնողն ու աղջիկ աշակերտը դիմեն երբեմն նոյնիսկ անյայտ ծագումով, նեղ և անյարմար շէնքում հաստատած դպրոցը՝ հրաժարելով հայկական մեծ ու լուսաւոր դասարաններ ունեցող դպրոցից, հայկական մթնոլորտից և հայեցի դաստիարակությունից»:  
<http://www.hyeli.net/index.php/kt/2340///>

ԹՀԹ Կրթական խորհրդի անդամ Թալին Բաղումեանի, 13 Յունիս 2012թ.-ի միեւնոյն կայքէջում տեղադրած գրությունը փաստում է, որ այս ամբողջ աղմկարար, վարկաբեկիչ եւ պառակտիչ գրությունների հետեւում ովքեր են կանգնած:

«Մարի Մանուկեան. հնարաւոր լուծում» վերնագրով գրությունում կարդում ենք.

«Դպրոցը պատկանում է Հայկական Բարեգործական ընդհանուր միությանը (ՀԲԸՄ): Նիւթական խնդիրները, ներառեալ ուսուցիչների և պաշտօնեաների աշխատավարձերը և ապահովագրության մուծումները, շէնքի պահպանման և նորոգությունների ծախսերը, ու բնականաբար նաև աշակերտներից թոշակների գանձումը կատարում է միության միջոցով:

Հայ փոխտեսչի, ուսուցիչների և հայ պաշտօնեաների ընտրությունը ևս կատարում է նոյն միության կողմից, որը, սակայն, հարկ եղած պարագային, դիմում ու ստանում է Թեհրանի հայոց թեմի Կրթական խորհրդի տեսակէտը:

Մի խօսքով, դպրոցի տէրն ու տիրականը Հայկական Բարեգործական Ընդհանուր միությունն է»:

«Դպրոցների ծնողական խորհուրդները, լինելով դպրոցի ծնողների ներկայացուցիչը, պարտականություն ունեն հետևել իրենց փոխանցած կամ հենց Խորհրդի անդամներից որևէ մեկի միջոցով նկատած այն խնդիրներին ու թերություններին, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ դպրոցի ուսման մակարդակի վրայ:

Օնոդական խորհուրդը կարող է նոյնիսկ դիմում կատարել Կրթադաստիարակության նախարարության պատկան կենտրոն՝ ուսուցչի կամ որևէ պաշտօնեայի փոփոխության համար: Մարի Մանուկեան դպրոցի պարագային, նման որևէ գրության կամ նամակի մասին տեղեկություններ չկան, ինչը զարմանալի է, յատկապես երբ շրջող դժգոհությունների մեծ մասը հենց ներկայ տեսուչի գուծունեության մասին են»:

<http://www.hyeli.net/index.php/kt>

Սփիւռքեան դժարին պայմաններում, այս սաղրիչ գործունեության մասին փաստերը Սփիւռքի եւ Հայաստանի հանրության սեփականությունը դարձնելուց յետոյ, անիմաստ ենք համարում խօսել Թ.Հ.Թ. Կրթական խորհրդի վերահսկողության ենթակա դպրոցների կարգ ու կանոնի եւ կրթական վիճակի մասին, բաւարարելով յիշեցնել միայն, որ աւելի քան մէկ տասնամեակ դաշնակցական նախարարին ենթակայ Հ.Հ. կրթական նախարարությունը, Հ.Հ. ամենակոռուպացած նախարարություններից մէկն էր:

Ա. Յովհաննիսեան, ուսուցչուհի  
Թեհրան, 25-06-2012  
a.hovhanesian@yahoo.com

**ԹՈՒՐԹԻԱՆ,  
ՄԻՈՆԻԶՄԸ,  
ՄԱՍՈՆՆԵՐԸ**

**ԵՎ**

**Հ Ա Յ Ո Ց Ց ԵՐԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ԳԱՄՊԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ**

**(Հատված)**

**Բ. ՈՎԵՐՐ ԷԻՆ ԵՐԻՏԹՈՒՐԸ ՇԱՐԺՄԱՆ  
ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԸ**

Մի պահ կարող է ենթադրվել, որ Երիտթուրքական շարժումը ինքնուրույն թուրքական մի շարժում էր, որ յուրացրել էր Պան-թուրքիզմի վարդապետությունը միայն և թուրքացրել այն...

Պատմական տվյալները ցույց են տալիս, որ երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» («Իթթիհադ վե Թերաքքի») կոչվող կուսակցությունը ևս սիոնական շարժումի ձեռնասունն էր՝ հիմնված, կազմակերպված, ֆինանսավորված և կողմնորոշված Մակեդոնիայի սիոնական-մասոնական օթյակների կողմից: Այստեղ ևս նրանց առնչակցությունը օրգանական է, պորտալարային, ծննդական...

Այսպես՝

1492 թվականից Մակեդոնիայի Սելանիկ քաղաքում հաստատվել էր հրեական մի մեծաթիվ գաղթօջախ, կազմված Իսպանիայից արտաքսված հրեաներից: Ժամանակի ընթացքում նրանք առերես ընդունել էին իսլամը, և չփոթվելու համար թուրքերի հետ՝ կոչվում էին «ղեռմե»-ներ [«ղեռմե» թուրքերենում նշանակում է «շուռ տված» - վերահրատարակման խնք.]: Սելանիկում դեռնմենքը



կազմակերպվել էին մասնական օթյակներում, և վերջիններս միջոցով կապված էին սիոնական համաշխարհային շարժումի կենտրոնի հետ: Սելանիկի այս օթյակներն էին, որ հիմնադրեցին «Իթթիհադ վե Թերաքքի» կուսակցությունը պայքարելու համար սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի դեմ, քանի որ նա շարունակաբար մերժում էր գործարք կնքել սիոնական համաշխարհային շարժման հետ, ձեռնունայն վերադարձնելով Սիոնական շարժման հիմնադիր Թեոդոր Հերցելի առաքած բոլոր բանագնացներն ու միջնորդները, որոնք փորձում էին կաշառել սուլթանին՝ նրանից կորզելու համար Պաղեստինը կամ այն հրեաներով վերաբնակեցնելու թույլտվություն ձեռք բերել:

«Իթթիհադ վե Թերաքքի» կուսակցության հիմնադիր պարագլուխներն էին Էնվեր, Թալաթ, Ջավիդ և Ջեմալ, որոնցից առաջին երեքը հրեա-սիոնիստներ էին և ղեկավարները Սելանիկի մասնական կենտրոնական օթյակների:

Անգլիացի ճանաչված պատմաբան Սիբոն-Վաթսոն 1917թ. հրա-տարակած իր «Ազգայնականության զարթոնքը Բալկաններում» գրքում գրում է, թե «Իթթիհադ վե Թերաքքին ո՛չ թուրքական է, ո՛չ էլ իսլամական» ու ավելացնում, որ այդ կազմակերպության բոլոր հիմնադիր ղեկավարները, առանց բացառության, հրեաներ են, և թե իթթիհադականները «Ֆինանսավորվում են Սելանիկի հարուստ հրեաների, ինչպես նաև համաշխարհային հրեական կապիտալիզմի կողմից»:

Անգլիացի աշխարհահռչակ պատմաբան Առնոլդ Թոյնբի, իր հեթին, հաստատում է. «Մակեդոնիայի Սելանիկ քաղաքի հրեությունը անբաժան մասն էր կազմում Իթթիհադ վե Թերաքքի կազմակերպության...»:

Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Լուրթըր իր եր-կրի արտաքին գործերի նախարարությանն առաքած բոլոր տեղե-կա-գրերում «Իթթիհադի» մասին խոսում է որպես «հրեական կազ-մակերպության», իսկ երիտթուրքերի կառավարության մասին էլ որպես «հրեական կառավարության»...

Հայտնի պատճառներով և հասկանալի գաղտնապահությամբ, թուրք պատմաբանները զգուշանում են «Իթթիհադի» հրեական պատկանելության անդրադառնալուց, սակայն չեն կարող ուրանալ «Իթթիհադի» մասնական պատկանելությունը: Թուրք ծանոթ ուսումնասիրող Շյուքրյու Համիօղլու հաստատում է, թե Իթթիհադի գերագույն ղեկավարությունը՝ Ներքին ընդհանուր կենտրոնը (Dahili Merkezi Umumi) կազմված էր գերագույն մասնական երկու օթյակներից:

Իսկ 1965թ. Ստանբուլում հրատարակված ու «Մասնականությունը Թուրքիայում և աշխարհում» խորագիրը կրող գրքի 60-րդ էջում կարդում ենք. «Իրականում, Իթթիհադ վե Թերաքքի կուսակցությունը մասնական օթյակների մի նմանակն էր: Եթե հարցերին այս անկյունից նայենք, կզտենք, որ մասնները շատ մեծ դեր են ունեցել սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի գահընկեցության մեջ»:

Նույնիսկ Զյազիմ Կարաբեքիր փաշա, որ մի մեծ աղվես էր, «Իթ-թիհադի» մասին իր հեղինակած գրքում ակամա խոստովանություններ ունի «Իթթիհադից» ներս հրեական և մասնական ներկայության շուրջ...

Իսկ Էլի Կեդուրիե «Միդլ իսթըրն սթադիզ» (Middle Eastern Studies – Միջինարևելյան ուսումնասիրություններ) հանդեսի 1971թ. առաջին համարում ունի մի երկար ուսումնասիրություն՝ «Երիտթուրքերը, մասնները և հրեաները» խորագրով, որն ինքնին պերճախոս մի վկայությունն է ցարդ մեր կատարած հաստատումներին ի նպաստ:

Դ-ժբախտաբար, հայ պատմագրությունը «Իթթիհադ վե Թե-րաք-քիի» իսկության մասին շատ ժլատ կամ հետամնաց վերաբերմունք ունեցած է մինչև օրս: Միակ աշխատասիրությունը, որ մասնակիորեն անդրադարձած է Պանթուրքիզմի և մասնավորաբար երիտթուրքական կազմակերպության մեջ սիոնականության դերին, վաղամեռիկ խիզախ պատմաբան Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր աշխատասիրությունն է: Այստեղ նպատակ չունենք ծանրանալու այս հետամնացության և խորհրդապահության եպերելի պատճառների վրա. սակայն հարկ է մատնանշել այն իրականությունը, որ հայ մամուլի և հրատարակությունների դատասպարտելի լռությունն է սիոնական հակահայ դերակատարության մասին, որ քնացրել է մեր ժողովրդին սիոնական վտանգի հանդեպ: Եվ մենք այսօր, այս բախտորոշ օրերում իսկ, ակոսասնքով ենք լսում անպատասխանատու ժխտումներ Միոնիզմի և Պանթուրքիզմի ներկայացրած սպառնալիքների մասին՝ նույնիսկ պատասխանատու անձերի բերանից... Մինչդեռ համաշխարհային պատմագրության մեջ հանդիպում ենք բազմատասնյակ հատորների և բազմահարյուր ուսումնասիրությունների Միոնիզմի խլրդային դերակատարության մասին ոչ միայն Պանթուրանականության վարդապետության, այլև երիտթուրքական կազմակերպության հիմնադրության փաստերում... Արաբ պատմագրությունը հարաբերաբար նվազ ժլատ է եղել այս ուղղությամբ:

Նույնիսկ թուրք պատմաբաններ և քաղաքական հրապարակագիրներ շեշտել են երիտթուրքերի օտարամուտ լինելու փաստը, սիոնական պատկանելությունը: Նրանցից է Ջեվադ Ռիֆաթ Աբիլխանը, որ հեղինակն է մի շարք հատորների, որոնցից ուշագրավ է «Թուրք օղլու, դուշմանընը թանը» («Թուրքի որդի, ճանաչիր թշնամուդ») հատոր-ը:

Այսպիսով հստականում է, որ Պանթուրքիզմը որպես տեսութ-յուն և որպես կազմակերպություն, հղացումն է և ձեռակերտը Միոնիզ-մի...

Շար. 2

## Մշակույթ

### Շայերեն տպագրության 500-ամյակ (1512-2012)

Համադրեց՝

Դոկտոր Էդ. Բադրասարյանը

#### ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Աստվածաշունչը մարդկային քաղաքակրթության մեծ նվաճումներից է: Նրանում ամփոփված են անհիշելի ժամանակներից եկող կյանքի փիլիսոփայությունը, մարդկանց կուտակած վիթխարի կենսափորձը, տիեզերքի, աշխարհի արարման ու պատմական անցքերի վերաբերյալ մեր նախնիների պատկերացումները, որոնք հաճախ սերտորեն առնչվում են գիտության տվյալներին:

Աստվածաշունչը քաղկացած է երկու մասից՝ Հին կտակարան և Նոր կտակարան: Ամբողջ Աստվածաշնչի մեջ մտնում են 75 տարբեր գրքեր, որոնցից 46-ը Հին կտակարանի գրքերն են, 27-ը՝ Նոր կտակարանի: Այս գրքերը գրվել են շուրջ քառասուն հեղինակների կողմից և տարբեր ժամանակներում՝ 1500 տարիների ընթացքում: Հին կտակա-րանի գրքերը գրվել են Հիսուս՝ Քրիստոսի ծննդից

առաջ, այ-սինքն՝ նախքան 1 թվականը: Այդ գրքերը գրվել են հին հրեերեն (եբրայերեն): Նոր կտակա-րանի գրքերը գրվել են Հիսուսի խաչելությունից հետո՝ մինչև առաջին դարի վերջը (մինչև 1 թվականը)՝ հին հունարեն:

Հրեա հոգևորականները դեռ շատ հնում Հին կտակարանի գրքերը հավաքել ու միավորել են որպես մեկ ամբողջական գիրք:

Քրիստոնյա հոգևորականներն էլ հավաքել, ստուգել ու որպես մի ամբողջական գիրք միավորել են Նոր կտակարանի գրքերը: Եվ ահա Հին և Նոր կտակարանները միասին մի ամբողջական գրքում կազմել են Աստվածաշունչ մատյանը, որը դարեր շարունակ քրիստոնյա ամբողջ աշխարհի Սուրբ գիրքն է եղել և է:

Հույներն այն անվանել են հենց Գիրք, հունարեն՝ Բիբլիա: Այս անունը տարածվեց աշխարհի լեզուների մեջ, իսկ հայերը գիրքը կոչեցին ճիշտ անունով՝ Աստվածաշունչ:

Աստվածաշունչն ամբողջությամբ կամ նրա առանձին մասերն այսօր թարգմանված են ավելի քան 1700 լեզուներով: Դա ամենից ավելի շատ թարգմանված ու հրատարակված գիրքն է:

Հայերն աշխարհում առաջիններից էին, որ թարգմանեցին Աստվածաշունչը: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը և վարդապետ Մեսրոպ Մաշտոցը իրենց աշակերտների հետ՝ սկսած 405 թվականից, շուրջ 30 տարում, ամբողջությամբ թարգմանեցին Հին ու Նոր կտակարանները: Այդ թարգմանությունը լավագույնն է մյուս թարգմանությունների մեջ, ուստի և կոչվում է Թարգմանությունների թագուհի:

Հայերն առաջիններից են եղել նաև Աստվածաշունչը տպագրելու գործում: Հին կտակարանի գրքերից մեկը՝ Մադոնսարանը, հայերեն առաջին անգամ տպագրվել է 1565 թվականին, Վենետիկում, Աբգար դայիր Թոխաթեցու կողմից: Հայերեն Ամբողջ Աստվածաշունչը առաջին անգամ տպագրվել է 1666—1668 թվականներին, Ամստերդամում, Ռսկան վարդապետ Երևանցու կողմից: Դա 1436 Էջանոց մի հսկա գիրք է, գեղեցիկ նկարազարդումով: Դրանից հետո հայերեն Աստվածաշունչը՝ թե՛ գրաբար, թե՛ աշխարհաբար, շատ անգամ է տպագրվել: Ամենից ավելի շատ տպագրվել է Նոր կտակարանը:

**ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ**

Հայերեն առաջին պարբերականը Ազդարարն ամսագիրն է, որ հրատարակվել է Մադրասում (Հնդկաստան), 1794-1796 թվականներին: Ընդամենը լույս է տեսել 18 համար:

Խմբագրել և իր հիմնած տպարանում գրաբարով, մասամբ էլ հնդկահայ և Նոր Ջուղայի բարբառներով տպագրել է Հարություն Շմավոնյանը:

**ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ**

Մատենադարանը Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, հիմնադրվել է 1959 թվականի մարտի 3-ին, Պետական ձեռագրատան (Մատենադարան) հիմքի վրա: 1962 թվականից՝ Մաշտոցի անվան: Ունի մատենագրության և մանրանկարչության, հին մատենագրության, միջնադարյան մատենագրության և վավերագրերի, բնագիտական հուշարձանների և ձեռագրերի պահպանության, նաև արխիվային, ձեռագրերի վերականգնման ու պատճենահանման բաժիններ, հայագիտական գրադարան:

Մատենադարանում հավաքված է աշխարհում առկա ավելի քան 25 հազար հայերեն ձեռագրերի կեսից ավելին: 1989 թվականի տվյալներով Մատենադարանի ձեռագրերի ընդհանուր թիվը մոտ 16,5 հազար միավոր է, որից շուրջ 5—18-րդ դարերի հայ պատմիչների, փիլիսոփաների, աստվածաբանների, բանաստեղծների, մաթեմատիկոսների, բժշկիկների երկեր են, ինչպես նաև հին աշխարհի և միջնադարի հույն, ասորի և այլ ազգությունների հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունները, այդ թվում նաև միայն հայերեն թարգմանությամբ պահպանված մի շարք կարևոր հուշարձաններ: Մատենադարանում ձեռագրերի պահպանման համար պատրաստված են հաստատուն ջերմաստիճանի և խոնավության պահեստարաններ:

**ԸՆՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

*Պրոֆ. Ծ. Պ. Աղայան*

Հայ ազգային-ազատագրական շարժումներին աջակցելու նպատակով այդ տարիներին ստեղծվում են մի շարք գաղտնի և կիսագաղտնի ընկերություններ ու ակումբներ, որոնք զգալի դեր են կատարում գլխավորապես նյութական միջոցներ ժողովելու գործում: Դրանցից առանձնապես հետաքրքրարկան է 1866 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Մեր» օթյակը, որը գլխավորապես հետևել է եվրոպական հեղափոխական շարժումների և ֆրանսիական լուսավորիչների գաղափարներին՝ իր հիմնական նպատակը համարելով կռիվ ելնել բռնության դեմ: «Մեր» օթյակի վարչությունը գլխավորում էր Մատթեոս Մամուրյանը, նրա անդամներն էին Հ. Սըվաճյանը, Ս. Թազվորյանը և ուրիշներ: 1867 թ, այդ կազմակերպության մեջ է մտնում նաև Սկրտիչ Պեշկեպաշյանը: Նրան օթյակի անդամ ընդունելու արարողության երեկոյին երգվել է նրա «Եղբայր եմք մենք» ստեղծագործությունը, որը և դարձել է ընկերության հիմնը: Օթյակի անդամները, որոնց նշանաբանն էր ֆրանսիական հեղափոխության առաջադրած ազատություն, հավասարություն, եղբայրություն կոչը, երգվեցին հարազատ մնալ Մ. Նալբանդյանի գաղափարներին: Նման ընկերություններ են ստեղծվել նաև Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի ու այլ երկրների հայ գաղթօջախներում:

Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցին կից 1868 թ. հունիսին հիմնադրվում է «Որբախնամ» ընկերությունը, իսկ հաջորդ տարում նրա որոշ անդամներ՝ Արսեն Կրիտյանի և

Պետրոս Հայկազունու նախածեռնությամբ կազմում են «Բարենպատակ» ընկերությունը: Ընկերությունն իր խնդիրն էր համարում օգնության ձեռք մեկնել Արևմտյան Հայաստանին, հատկապես Վասպուրականում համընդհանուր ապստամբություն բարձրացնել և զենքի ուժով ազատություն նվաճել: Արս. Կրիստյանի համոզմունքն էր, որ արյան գնով միայն կարելի է փրկել ազգը: Ընկերության անդամները հանգանակություն կատարելով միջոցներ էին ժողովում, զենք ձեռք բերում, կադրեր պատրաստում և ուղարկում Արևմտյան Հայաստան, կապ հաստատում Կ. Պոլսի և Ռուսաստանի առաջավոր գործիչների հետ, ստանում գաղտնի գրականություն, այդ թվում նաև Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը: 1875 թ. ցարական ոստիկանությունը ձերբակալեց այդ ընկերության անդամներին և արքային: Ընկերությունը դադարեց գոյություն ունենալ:

Արևմտյան Հայաստանում, ի տարբերություն այլուր գործող հասարակական խմբավորումների ու հոսանքների, ժողովրդի շահերն արտահայտողը և նրա հոգսերին ընդառաջողը դեմոկրատական հոսանքն էր: Այդ հոսանքի ականավոր դեմքը եղել է Մ. Նալբանդյանի հետևորդ Հ. Մրվաճյանը, իսկ ակտիվ գաղափարախոսները՝ Գրիգոր Չիլինկիրյանը, Կ. Փանոսյանը, 1848 թ. Ֆրանսիական հեղափոխության ակտիվ մասնակից Ս. Ոսկանյանը, Ա. Հայկունին, Ս. Թազվորյանը և ուրիշներ: Նրանք մեծ կրթություն էին պայքարում ավատատիրական կարգերի վերացման, լուսավորության ու մշակույթի զարգացման համար, չէին ճանաչում ոչ մի հեղինակություն և պահանջում էին, ինչպես Էնգելսն է արտահայտվել, բանականության դատաստանի առջև դնել այն ամենը, ինչ պետք է «արդարացներ իր գոյությունը, կամ թե անհետանար: Մտածող բանականությունը դարձավ գոյություն ունեցող ամեն բանի միակ չափանիշը»:

Արևմտյան Հայաստանի դեմոկրատական հոսանքի օրգաններ «Մեղու», «Ծաղիկ», «Մյունատի», «Միություն» պարբերականները, հատկապես Չեյթունի ապստամբությունից հետո, պրոպագանդում էին այն գաղափարը, որ Հայ ժողովուրդը կարող է ազատագրվել զինված ապստամբության միջոցով: Մեծ դեր են կատարել Ատ. Ոսկանյանի «Արևելք» և «Արևմուտք» հանդեսները, որոնք հրատարակվում էին Փարիզում 1850 — 1860-ական թվականներին և վայելում էին Մ. Նալբանդյանի համակրանքը:

Հ. Մրվաճյանը հետևողականորեն պաշտպանեց Մ. Նալբանդյանի հայացքները, պայքարեց նրա հակառակորդների դեմ, նրա «Երկու տողը»-ը տպագրեց իր «Մեղու» պարբերականում, որի դեմոկրատական ուղղությունը Մ. Նալբանդյանը շատ բարձր էր գնահատում և այն համարում էր երիտասարդության և ժողովրդի «մաքուր բերանը, ազգի ցավերի ու ուրախության ճշմարտապես հայտարարը»:

Ինչպես շատ-շատերի, այնպես էլ Հ. Մրվաճյանի կյանքում Չեյթունի հերոսական ապստամբությունը կարևոր նշանակություն ունեցավ: Նա հատկապես կանգնեց նախկինում արտահայտած իր այն եզրակացությունից բռնադատող դիրքերում, թե «ազատության մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վրա», որ ժողովուրդն է այդ «մեքենայի առանցքը, լծակը և հաստատունը»: Հանուն այդ ճշմարտության նա կոչ էր անում պայքարի ելնել ժողովրդի թշնամիների՝ սուլթանի, ցարի, ամիրաների և էֆենդիների, հոգևոր ու աշխարհիկ տերերի դեմ: Նրանք են, որ հալածում ու քայքայում են գեղջուկին, պանդխտության գիրկը նետում և երկիրը ավերածության մատնում:

Մրվաճյանը լսելի դարձրեց գավառահայության ձայնը և հնչեցրեց դասակարգային պայքարի ելնելու կոչը:

Դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները, սերտ կապերի մեջ մտնելով գավառի հետ, աճեցրին մի սերունդ, որը գլխավորում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներն ու սոցիալական պայքարը:

ԲՅՊ.13

## Սոհեր

### Մեր Անցած Ճամբան

Թ. Ղարախանյան Սիրակցի

Ուսման Չորքի վեց ամսյա զինավարժությունը ավարտման վերջին օրերին մեզ հայտնեցին մեր ծառայության գյուղերի անունները: Ես ցանկացել էի ծառայել որեւէ մի հայաթափ կամ հայաբնակ գյուղում որեւէ մի գավառում, հարավի Չարմահալից ու Փերիայից բռնած մինչեւ հյուսիսահին Ուրմիա և Սալմաստ: Ինձ բախտ վիճակեց ծառայել Չարմահալ գավառի արդեն հայաթափ եղած ԱՂԲՈՒԼԱՂ գյուղում որտեղից 1946 թ. լրիվ գյուղը ներգաղթել էր Հայաստան և Աղբուլաղի կողքի Բուլդաջի անունով մեծ գյուղից տեղի պարսիկ ընտանիքներ ներքաշվել էին Աղբուլաղ շարունակելով հողագործություն և նախրապահություն:

Շիրազ քաղաքից, մեզ տեղափոխեցին ԻՍՖԱՀԱՆ քաղաքի կենդրոնում ուսման զորքի կենտրոնավայր եւ հիևզ օր արձակուրդ տալով հրամայիցին մեր ընտանիքներին այցելել և մեր անձնական անկախ ապրելակերպի իրեղենները դասավորելու և վեցերորդ օրը պատրաս լինենք մեկնելու դեպի մեր Նշված գյուղերը: Այսպես հիևզ օր հորեղբայրներին, հորաքույրներին, մեծ պապ ու մամին նեղություն պատճառելուց հետո, մերոնց ուղարկած դրամով և զինվորության վեց ամսվա խնայողություններից մենակ ապրելու կահավորանքները լրացրինք և պատրաստված վերադարձանք զինվորանոց:

Մյուս օրը քսան երկու հոգուս զինվորական բեռնատարով փոսդրեցին ավելի փոքր գավառի կենդրոն ՇԱՀՐ-Է-ՔՈՐԴ անունով մի փոքր քաղաքի զինվորանոց: Չինվորական արարողություններից հետո, մեզ բաժանեցին չորս հոգանոց խմբակների,երեք զինվոր մեկ ղեկավարով եվ այնտեղից զինվորական «Ձիփ» մեքենաներով մեր ղեկավարը շոֆերի տեղը նստեց եւ քշեց դեպի արևելք Բորուջեն անունով մի քաղաք:

Ստո կեսօրվան հասանք այդ Բորուջեն կոչված քաղաքի ուսուցչական կենդրոն եւ բոլոր քսաներկու զինվոր-ուսուցչականներս միացանք մի դահլիճում որտեղ մեզ դիմավորեց Բորուջեն քաղաքի ժԱՆԱՐԱՍԵՐԻ-ի մեծը (իր Թավրիզի հատուկ քաղցր պարսկերեն-Ատրպատականի բարբառով և ժայտալից երկու ոսկի ակռեքը երևացնելով) և գավառի կրթական պետը որը ինքն էլ մեզանից վեց ամիս առաջ էր եկել Պարսկաստանի Ռաշտ քաղաքից. նա էլ իր Ռաշտի քաղցրահունչ բառերով հարգանքի բարի գալստյան խօսքերով և Շահնշահ Թագավորի Սպիտակ Յեղափոխության վեց կետանոց ծրագրերի գովասանքը կարդալով, մեզ մեր ծառայության բարձրագույն իղեալիզմի մասի խոսեց որ գրեթե Ուսման Չորքը այն ծրագրներից է որ մեր ժողովրդին պիտի հասցնի ԳԵՐ-ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ դարպասների մոտ: